

**ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻՆ ԵՎ ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ՈՒ
«ՄԱԴՐԱՍՅԱՆ ԽՄԲԱԿ»-Ի
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ**

ՍԱՍՈՒԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18-րդ դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման մեջ մեծ դերակատարում ունեցավ Հնդկահայ գաղութը: Ազգային ազատագրական շարժման գաղափարներն իրենց ծիլերն արձակեցին Հնդկաստանի Կալկաթա և Մադրաս քաղաքների գաղթօջախներում, որտեղ մի շարք հայ հասարական-քաղաքական գործիչներ հանդես եկան Հայաստանի ազատագրման ծրագրով:

Ազատագրական շարժման ականավոր գործիչներից էր Հովսեփ Էմինը¹, ով Հոնդոնում ստացել էր զինվորական կրթություն: Ավարտելով Վուլվիչի զինվորական ակադեմիան՝ 1759 թ. նա գալիս է Հայաստան, ուր փորձում է ժողովրդի մեջ բարձրացնել ազգային-ազատագրական ոգին՝ հանուն հայրենիքի ազատության ու անկախության:

Հ. Էմինը 1761 թ. էջմիածնում հանդիպում է Հակոբ Շամախեցի կաթողիկոսին: Վերջինս պատշաճ ընդունելության է արժանացնում Հ. Էմինին, անգամ սր. Զատկի տոնի օրը Մայր Աթոռում իր օրհնությունն է տալիս նրան. «Նորին սրբությունը իր երկու ձեռքերը դրեց նրա գլխին և որոշ աղոթքներ ասելուց հետո օրհնեց նրան»²: Սակայն Հ. Էմինը կաթողիկոսին չի ներկայացնում իր ազգային-ազատագրական ծրագրերը: Ամենայն հավանականությամբ պատճառն այն էր, որ Մայր Աթոռի հոգևորականները բացասական վերաբերմունք ունեին նրա նկատմամբ³: Նրանք ամեն կերպ փորձում էին համոզել կաթողիկոսին, որպեսզի վերջինս խուսափի Էմինի հետ շփումից: Հ. Էմինի և Մայր Աթոռի հոգևորականների հարաբերություններն այն աստիճան էին լարված, որ նրանք կաթողիկոսի բացակայության ժամանակ նույնիսկ բանտարկում են նրան:

¹ Հովսեփ Էմինը (1726-1809 թթ.) ծնվել է Պարսկաստանի Ջամադան քաղաքում: Մանուկ հասակում ծննդմերի հետ տեղափոխվել է Բաղդադ. «In the year 1726, Emin, the writer of these memoirs, was born at Hamadan, and in 1731 or 1733, he went with his family to Bagdad». տես Life and Adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 5: A. Իօաննիսյան, Իօսիֆ Էմին, Издательство АН Армянской ССР, Ереван, 1989.

² Life and Adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 153: Նշված գրքից արված թարգմանությունները հոդվածի հեղինակին են:

³ Ըստ Հ. Էմինի՝ պատճառն այն էր, որ ինքը ատրճանակով սպանել էր Մայր Աթոռի շներից մեկին, երբ հարձակվել էին վրա: Այդ միջադեպն իր դեմ է տրամադրում տեղի հոգևորականներին:

Հայաստանն ազատագրելու նպատակով Հ. Էմինը փորձում էր օգ-նություն ստանալ Ռուսաստանից: Մեկնելով Ս. Պետերբուրգ՝ նա բա-նակցություններ է սկսում ցարական արքունիքի հետ: 1763-ին նա Ռու-սաստանից գալիս է Վրաստան և վրաց Հերակլ արքայի կողմից մեծ ընդու-նելության արժանանում: Հ. Էմինը փորձում էր համոզել վրաց արքային պայքար մղել օտար զավթիչների դեմ՝ հավաստելով նրան, որ ազատագ-րական պայքարին իրենց մասնակցությունը կցուցաբերեն նաև հայ մելիք-ներն իրենց զորքերով: Սակայն Հ. Էմինի ազգային-ազատագրական գա-ղափարներին դեմ դուրս եկավ նորընտիր կաթողիկոս Սիմեոն Երևանցին: Վերջինս համոզված էր, որ պահը դեռևս չի հասունացել պայքարի ելնելու թուրքիայի և Պարսկաստանի դեմ: Որպեսզի ավելորդ անգամ արյուն չհեղփեր՝ Ս. Երևանցին ամեն կերպ փորձում էր կասեցնել Հ. Էմինի գոր-ծունեությունը՝ անվանելով նրան վտանգավոր մարդ:

Սկզբնական շրջանում Հ. Էմինի և վեհափառի հարաբերությունները բարիդրացիական էին, ինչը և հաստատում է Հ. Էմինը. «Սիմոն կաթողիկո-սը՝ Հակոբի հաջորդը, սկզբնական շրջանում հակված էր աջակցել Էմի-նին»¹: Հատ Հ. Էմինի, կաթողիկոսի հետ հարաբերությունների հետագա վատթարացման պատճառը Հերակլ արքան էր, ով լրջորեն չէր վերաբերվում նրա ծրագրերին. «Երբ նա (Ս. Երևանցին) իմացավ, որ իշխանի (Հերակլի) սրտի ցանկությունը իրականում այն չէ, ինչը նա արտաքնապես է ցույց տալիս, և որ իշխանը ցանկանում է նրան (Էմինին) որպես գործիք ծառա-յեցնել, կաթողիկոսը նամակ է գրում իշխանին՝ հայտնելով, որ նա՝ արքան Հայաստանի և Վրաստանի, լավ կլինի այդ անգայույշ մարդուն ետ ուղարկի այնտեղ, որտեղից եկել էր»²: Բնականաբար Հերակլի վերաբերմունքն Էմինի նկատմամբ կտրուկ փոխվեց այն ժամանակ, երբ Ս. Երևանցին նա-մակով արքային խնդրեց, որ նրան արտաքսի Վրաստանի սահմաններից: Այս առումով շատ բնութագրական է Վրաց արքային ուղղված Սիմեոն Երևանցու նամակը³, որից պարզ է դառնում, որ Հ. Էմինի նամակատարը,

¹ Life and Adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 218: Թարգմանությունը - Ս. Յ.:

² Նույն տեղում, էջ 219:

³ «Դարձայ և զայս առանձինն ծանիցէ տերութիւնդ, զի այդ մէր պարոնին (Էմինին) մէկ երկու մարդ ունի, որը միշտ գան յայս կողմանս և համարձակ և բացարերան խօսին զբանս անպատշաճս, զորս լոեալ հայք և տաճիկը, ոմանք ծաղր առնեն և ոմանք սրեն լեզու ի վերայ մէր: Յայս միջոցիս, մէկ մահտեսի Գրիգոր ունի, Եկմ յերևան և աստ լրբարար խօսելով կրոնալ է ընդ խանի մարդ-կանցն, և նորա և գանեալ էին զնա և մերկացուցեալ, և զոր ինչ գրեանս ունէր առեալ էին և տա-րեալ խանին և այլոց ցույց տոեալ: Բ գիր էր ունեցեալն՝ մեկն ի դմանէ և մէկն ի տէրութեմէր առ սուրբ Կարապետու առաջնորդ Յոնան վարդապետն գրեցեալք: Զորս տեսին ամենեքեան: Եւ առ մեզ ևս բերին և տեսաք որ քո կնիքն էր և յոյժ զարմացանք: Բայց մեք ստեցաք ասելով թէ կնիքդ հնարեցեալ է և ոչ է վալուն կնիքն. զայս ամենայն իմացան Երկրացիքս և ի քաղաքէն և շատ մար-դիկը և մանաւանդ Տէր Գարդէլն, որ ետես և լուաւ, այժմ կամին ասել Ազնոյոյ թէ ևս ոչ պատշաճ

անխոհեմ վարվելով, ձերքակալվել է Երևանի խանի մարդկանց կողմից: Նրա մոտ հայտնաբերվել են նամակներ, որոնցից մեկը կնքված է եղել վրաց արքայի կնիքով: Խանն այս մասին տեղեկացնում է կաթողիկոսին: Որպեսզի չսրվեն պարսիկ պաշտոնյայի և Հերակլի հարաբերությունները, Սիմեոն Երևանցին խանին համոզում է, որ կնիքը կեղծված է: Հետագա ընդգուռներից խուսափելու համար կաթողիկոսը Հերակլին խորհուրդ է տալիս զգուշավոր լինել իր գործողություններում: Սակայն նամակում կաթողիկոսը չէր հորդորում վրաց արքային, որպեսզի Էմինին՝ «անզգույշ իշխանին», արտաքսի Վրաստանի սահմաններից, ինչպես Հ. Էմինն է հավաստում: Փոխարենը նա Հերակլի միջոցով փորձում էր համոզել Հ. Էմինին չծավալել նման վտանգավոր գործունեություն, ինչը ստեղծված պայմաններում բացասաբար կարող էր անդրադառնալ թե՛ հայերի և թե՛ վրացիների վրա:

Այդ նամակի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ իրականում Հերակլը իր կնիքով հաստատել էր Սր. Կարապետի վանահայր Հովնանին ուղարկված նամակը: Արքայի կողմից Հովնանին հասցեազրված նամակի բովանդակությունը մեզ հայտնի չէ, բայց Հ. Էմինի ինքնակենսագրականից տեղեկանում ենք, որ ինքը և Հովնան վարդապետը ծրագրեր էին մշակում, որպեսզի պայքար սկսեին օտար զավթիչների դեմ՝ ազատագրելով Հայաստանը ստրկությունից: Շատ բնութագրական է Հ. Էմինի և Հովնանի նամակագրությունից հետևյալ հատվածը, որտեղ վանահայրը Հ. Էմինին հաղորդում է, որ Հերակլ արքայի օժանդակության դեպքում մեծ քանակությամբ հայեր պատրաստ են պայքարի գուրս գալ. «... Նույնիսկ կանայք են պատրաստ կռվելու, միայն թե Հերակլը համաձայնություն տա ձեր կողքին կանգնել: Եթե Հերակլի մոտ հաջողություն չունենաք, իմ հայրական խորհուրդն է, որ երբեք չհուսահատվեք և շարունակեք ձեր գործը ամբողջ կարողությամբ, չվախենաք որևիցե վտանգից, վստահեք Աստծուն: Եթե հաջողություն չունենաք, մեծ ճանաչման եք արժանանալու: Սակայն ես հուսով եմ, որ դուք միջոց եք լինելու ազատագրել ձեր

տեսնեն օրինեալ անուան քոյ զբո գիրդ և քո կնիքը այսպէս յիմարաց ծեռն անկանիլն, մանաւանդ վնաս ունի և ոչ օգուտ: Յառավել միրոյս գրեցի խնայելով ի պատիւ և յանուն արքայականի տերութեանդ: Յոնանն որքան մարդ է, որ դու նորան գիր գրիցես, վասն այսպիսոյ բանի, և գրատարն այսպէս յինար, որ ամենեցուն ցոյց տայցէ պարծելով, խնդրեմ զի լաւապէս մտածնալ որոշացես և մանաւանդ զդա ևս զգաստացուցիս, զի զգիրս և զնարդիկս իւր յինքն ժողովեսցէ և խոհեմությամբ շարժիցէ, զի երկիրս այլազգոյ ծեռաց է և մեք ի ծեռս սոցա կամք: Գիտես զինչ ասեմ, ոչ միայն այս երկրի այլ և յամենայն տեղիս, ուր գտանին ազգ մէր: Յանզի մեծ ցաւ ծնանի վերջապէս ազգիս մերոյ որպէս երկի և զայն Տէր Գաբրիէլն պատմեսցէ: Ողջ լեր ի տէր ի փառս խաչին թրիստոսի և ի պարծանս մէր», Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Օրինակը կոնդակացն Յակովբայ և Սիմեոնի կաթողիկոս մերոյ գրեալ ի թոհն Դայոց ՌՄՁԱ ց ՌՄԻԹ, ցուց. № 1, թղթ № 2, վակ. № 6, էջ 8:

Հայրենակիցներին հպատակութեան դաժան շղթաներից: Ես աղոթում եմ Աստծուն, որպեսզի պահպանի ձեզ հանուն Հայաստանի»¹:

Հ. Էմինն իր ազգային-ազատագրական ծրագրերը ներկայացրել էր Հերակլին: Վրաց արքան ընդունում էր նրան և մեծ տեղ էր տալիս: Ուստի Հ. Էմինի այն կարծիքին, թե Ս. Երևանցին իր հետ հարաբերությունները սրեց այն պատճառով, որ Հերակլը իրականում չէր ցանկանում օգտակար լինել իրեն, չի համապատասխանում իրականությանը մի պարզ պատճառով. Հերակլին ուղղված կաթողիկոսի նամակում հստակ երևում է, որ վրաց արքան իր թագավորական կնիքն է դրել նամակներից մեկի վրա, հիմնավորելով այն տեսակետը, որ արքան ընդառաջում էր Հ. Էմինի ծրագրերին: Հակառակ դեպքում Հերակլը, կշռադատելով ստեղծված քաղաքական պայմանները, նման համարձակ քայլի չէր դիմի՝ վտանգելով իր հարաբերությունները պարսկական իշխանությունների հետ:

Ս. Երևանցու խոսքը մեծ կշիռ ուներ Հերակլի մոտ, և նա չէր կարող անտեսել կաթողիկոսին: Իրոք, Ս. Երևանցու նամակը վճռորոշ դեր ունեցավ Հերակլի և Հ. Էմինի հետագա հարաբերություններում, ինչը երևում է արքայի հետևյալ խոսքերից. «Ես ի՞նչ կարող եմ անել Էմին աղա, երբ ձեր կաթողիկոսը, եպիսկոպոսներն ու վանականները դեմ են ձեզ: Իմ հպատակության տակ գտնվող ամենալավ հատվածը հայերն են, ովքեր նայում են նրանց.-(Հոգևորականներին).- իբրև մարգարեների և առաքյալների: Եթե ես ընդունեմ քեզ՝ հաշվի չառնելով նրանց ասածները, նրանք կմտածեն, որ ես ավել քրիստոնյա չեմ, քան Սուլթանը»²:

Ս. Երևանցու և Հ. Էմինի հարաբերությունների մասին բացի Հերակլին ուղղված կաթողիկոսի նամակից, ոչ մի ուրիշ հիշատակություն չկա: Հ. Էմինը ևս չի նշում, թե ինչո՞վ էր պայմանավորված կաթողիկոսի բացասական վերաբերմունքը: Մենք միայն նրանց միջև ձևավորված հարաբերությունների մասին կարող ենք կարծիք կազմել Հ. Էմինի ինքնակենսագրական աշխատության բովանդակությունից: Հեղինակի կողմից բերված նամակների և պատմությունների օրինակներից երևում է, որ Ս. Երևանցին մեծ արգելք է հանդիսացել նրա ծավալած գործունեությանը: Հ. Էմինի ինքնակենսագրականի մեջ ներառված է Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի երկխոսությունը հեղինակի հետ, որտեղ Հովհաննես կաթողիկոսն Էմինի բոլոր ձախողումների պատճառ է համարում Ս. Երևանցուն. «Տերը քեզ հետ է, ով իմ սիրելի բարեկամ և ազնվազարմ իշխան: Եթե Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմոնը ձեր հանդեպ ունենար այն հարգանքը, որ ու-

¹ Life and Adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 235-236:

² Նույն տեղում, էջ 233:

նենք ես, վանականները և ինը քաջարի եղբայրներս, այդ դեպքում հեշտությամբ կարող էիք բաղձալի վախճանին հասցնել գործը՝ արմատախիլ անելով քրիստոնեական հավատի թշնամիներին։ Բայց Սիմոնը ձեր բարեկամը չէ...։ Զգուշացիր նրա չար սրտից։ Մի դատապարտիր մեր իշխաններին և հայ ժողովրդին, որոնք իրենց ներուժով կմիանային քեզ և կենթարկվեին քո հրամանատարությանը, եթե նա չարգելեր։ Հիշու՞մ ես, տասնհինգ օր առաջ սուրհանդակս մի նամակ բերեց՝ ուղղված մելիք Յուսուֆին, երբ դու վերջինիս մոտ էիր Գյուլիստանում։ Դա Սիմոնի նամակն էր՝ ուղարկված սուրհանդակի միջոցով ինձ։ Նա ինձ խնդրում էր, որպեսզի սուրհանդակիս հետ այն ուղարկեմ մելիք Յուսուֆին՝ քեզ այնտեղից վտարելու համար։ Բացի այս նամակից նա ևս նամակներ էր ուղարկել մյուս չորս իշխաններին, որպեսզի քեզանից զգուշանան և չգործակցեն քեզ հետ։ Հակառակ դեպքում նա սպառնում է բանադրել նրանց...»¹։

«Life and Adventures of Joseph Emin» աշխատության մեջ կան նման շատ օրինակներ, որոնք վկայում են այն մասին, որ կաթողիկոսն իրականում խոչընդոտել է Հ. Էմինին։ Ինչպես նշեցինք, Հ. Էմինը չի գրում, թե ինչով էր բացատրվում Ս. Երևանցու այդպիսի վերաբերմունքը։ Ամենայն հավանականությամբ Ս. Երևանցին Հ. Էմինին ճանաչում էր դեռ այն ժամանակվանից, երբ վերջինս Հ. Շամախեցու կենդանության օրոք եկավ Էջմիածին։ Չի բացառվում, որ Հ. Էմինի դեմ դուրս եկած հոգեորականների թվում էր նաև ապագա կաթողիկոսը։

Հայ իրականության մեջ 18-րդ դարի երկրորդ կեսին սկիզբ առավ հակաֆեոդալական, բուրժուա-դեմոկրատական գաղափարախոսությունը։ Սակայն այն ձևավորվեց ոչ թե Հայաստանում, որը Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության ներքո գտնվում էր խիստ հետամնաց պայմաններում, այլ Հնդկաստանի հայկական գաղթօջախում, որտեղ ավելի ապահով պայմաններ կային առաջավոր գաղափարներ դավանելու համար։ Հայ լուսավորական, բուրժուա-դեմոկրատական գաղափարախոսությունը կրում էր երրոպական, ավելի ստույգ անգլիական ազգեցություն։ Հ. Էմինը Անգլիայում ուսանելու տարիներին հասցըել էր ծանոթանալ անգլիական լուսավորական գաղափարախոսությանը։ Նա համարվում է հայ իրականության լուսավորիչներից մեկը, ով առաջավոր գաղափարների հետ մեկտեղ կոչ էր անում քաղաքական պայքարը մղել հայրենիքի ազատագրման համար։ Հ. Էմինը պայքարում էր Հին կարգերի, հետամնաց կղերաֆեոդալական գաղափարների դեմ։ Նա բացասաբար էր վերաբերվում հայ հոգեռութականության նկատմամբ։ Էմինի կարծիքով հոգեռոր դասը ստրկության էր

¹ Life and Adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 321-322:

մղում սեփական ժողովրդին¹: Նրանք գավառազգեստ գայլերի նման խաբում էին ժողովրդին. «Սովորական մարդու հանդեպ շունչն ավելի գթասիրտ է, քան եկեղեցական հայրերը, որոնք թուրքական իշխանության գլխավոր փաստաբաններն են համարվում: Նրանք գիշեր-ցերեկ աղոթում են մահմեղական իշխանության հաջողության համար: Հաճախ լսել եմ, մինչև սրտիս խորքը վիրավորված, թե այս հայրերն ինչպես են իրենց սեփական հոտին անիծում և գիշատիչ գայլերին փառաբանում: Նման անխիղճ հարազատներով ի՞նչպես կարող է ազգն ազատվել գերությունից, բացի դրանից, երբ ազգը հրաժարվի գումար հավաքել եկեղեցականների համար: Եթե ազգն այդ դրամի մեկ քառորդը ծախսի իր երեխաների վրա՝ տալով նրանց պատշաճ կրթության, այդ գեպքում միայն հնարավոր կլինի բանական արարածին զանազանել գազանից, շատացնել լավ տունկերը՝ արմատախիլ անելով մոլախոտերը: Անշուշտ, միայն այս կերպ կստեղծվի ազատ ժողովուրդ»²:

Իրականում Միմեռն Երևանցին Հայ եկեղեցու նվիրյալն էր: Նա իր ամբողջ գործունեության ընթացքում ջանում էր կարգավորել և ամրապնդել եկեղեցու թե՛ հոգեսոր կյանքը, և թե՛ արտաքին պաշտպանվածությունը: Նա չէր կարող թույլ տալ Հ. Էմինի նման մարդու գործունեությունը, ով փնովում և դատապարտում էր Հայ եկեղեցու հոգեսոր դասին՝ մեղադրելով նրանց բոլոր դժբախտությունների մեջ: Ինչպես Լեռն է նշում, Ս. Երևանցին Հ. Էմինի մեջ տեսնում էր եվրոպական բողոքականության տարրեր՝ ուղղված ազգային եկեղեցու անդորրը խարիսկելուն. «Մի մարդ, որ կրոնական անհամբեռողությունը հասցնում էր ֆանատիկոսության, հալածելով և պատճելով կաթոլիկ դարձածներին, չէր կարող, իհարկե, ներել Էմինի պես մի համարձակախոս մարդու, որ դատապարտում էր Հայ հոգեսորականությանն ամեն տեղ, համեմատում էր Հայ հոգեսորականներին Եվրոպայի հոգեսորականների հետ և ասում էր, թե Հայ վարդապետներն իրենց հոտին ստրկություն են քարոզում: Անկասկած, Հայ հոգեսորականներն Էմինի մեջ տեսնում էին անգլիական և գերմանական բողոքականության մի գործիք, որ եկել էր մարտնչելու Հայ դավանության դեմ»³:

¹ Հովսեփ Էմինը քննադատում էր նաև հայ վաճառականներին: Ըստ Յ. Էմինի, Եթե հայ առևտրականները մի փոքր ավելի սիրեին իրենց ժողովրդի ազատությունը, քան դրամը, ապա հայրենիքն այդ վիճակում չեղ գտնվի. «Եթե հայ վաճառականները կիսով չափ ավելի սիրեին ազատությունը, ինչը նրանք ունեն դրամի ու նախապաշարումների հանդեպ, որոնք կործանարար հետևանքներ ունեն, վաղուց ազատված պետք է լինեին»: (Տե՛ս Life and Adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 198):

² Նույն տեղում, էջ 157:

³ Լեռ, Յայոց պատմություն, Երկերի ժողովածու, հատոր Երկրորդ, գիրք Երրորդ, Երևան, 1973, էջ 294:

Ա. Երևանցու և Հ. Էմինի միջև ձևավորված բացասական հարաբերությունների պատճառը գաղափարական տարակարծություններն էին: Թերևս այդ էր պատճառը, որ Ա. Երևանցին հակազդեց Էմինի ծավալած գործունեությանը:

Զգուշանալով պարսկական և թուրքական իշխանությունների հետ հարաբերությունների վատթարացումից՝ Հերակլը Հ. Էմինին արտաքսում է Վրաստանից:

Մատնվելով անհաջողության՝ Հ. Էմինը վերադառնում է Հնդկաստան, որտեղ 1773-ին ծանոթանում է «Մաղրասյան խմբակ»-ի հիմնադիր Շահամիր Շահամիրյանի¹ հետ: Անդամագրվելով այդ կազմակերպությանը՝ նա ակտիվ գործունեություն է ծավալում:

«Մաղրասյան խմբակ»-ի հայտնի գեմքերից էին Գրիգոր Զաքիկյանը, Հակոբ Շահամիրյանը (Շահամիր Շահամիրյանի որդին) և Մովսես Բաղրամյանը²:

Մաղրասյան խմբակը քարոզում և տարածում էր Հայաստանի ազատագրման գաղափարներ: 1772³ թվականին Մաղրասի տպարանում լույս է տեսնում Մ. Բաղրամյանի հեղինակած «Նոր տետրակ որ կոչի յորդորակ»

¹ Ծահամիրյանն ազգային- ազատագրական գործիչ է: Նա Յնդկաստանի Մադրաս քաղաք է տեղափոխվել Նոր Ջուղայից: Զբաղվել է հերձակությամբ, այնուհետև՝ առևտորով: Ծ. Ծահամիրյանը 1772 թ. Մադրասում հիմնում է հայկական տպարան: Նույն թվականին այդ տպարանում լույս է տեսնում հայ առաջին հրապարակախոսական գիրքը՝ «Նոր տետրակ որ կոչի հորդորակ»-ը: Այդ տպարանում է լույս տեսնում նաև Ծ. Ծահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունը: Ծ. Ծահամիրյանի նախաձեռնությամբ 1783 թ. տպագրվում է Մադրասի հայերի ինքնավարության (որի իրավունքն ինքն է ձեռք բերել) կանոնադրությունը՝ «Տետրակ որ կոչի նշավակ»: Նա փորձում էր Վրաց Շերակլ արքայի օժանդակությամբ ազատագրել Անդրկովկասը Պարսկաստանի և Թուրքիայի հպատակությունից: Նա կապեր է հաստատել ցարական արքունիքի և հայ ազատագրական շարժման գործիչներ Յովսեփ Արդուրյանի և Յովհաննես Լազարյանի հետ: (տես՝ Յայ ժողովրդի պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ԵՊՀ հրատ., Երևան, 1985, էջ 235-236: www.encyclopediad.am):

² Մովսես Բաղրամյանը 18-րդ դարի հայ ազատագրական մտքի ներկայացուցիչներից է: Նա սկզբնական ուսումնական աստացել է Նոր Ջուղայում: Եղել է հոգևորական՝ քահանայի կոչումով: Մ. Բաղրամյանը 1760-ական թթ. Ուսուսատանում հանդիպում է Յ. Էմինին, ծանրանում նրա ազգային-ազատագրական ծրագրերին: Այնուհետև նա օգնում է Յ. Էմինին ազգային-ազատագրական գործը Հայաստանում կազմակերպելու համար: 1767 թ. մեկնում է Յնդկաստան և հաստատվում Մադրաս քաղաքում: Յնդկաստանում նա ծավալում է մանկավարժական գործունեություն՝ դասավանդելով հայոց լեզու և հայոց պատմություն: Յետազայում համագործակցում է Մադրասի հայ հասարակական գործիչների հետ: Մ. Բաղրամյանը մեծ ներդրում է ունեցել Մադրասի 1772 թ. հիմնադրած տպարանի աշխատանքներին: Նա է հեղինակել «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» աշխատությունը: (Տես՝ Լեռ, Յայոց պատմություն, Երևանի ժողովածու, հատոր Երկրորդ, գիրք Երրորդ, Երևան 1973, էջ 314-318: Նաև Յայ ժողովրդի պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ԵՊՀ հրատ., Երևան, 1985, էջ 234-235):

³ Ո. Իշխանյան, Յայ գիրքը 1512-1920 թթ., Երևան, 1981, էջ 99:

աշխատությունը¹, որը հայ իրականության մեջ առաջին տպագիր գործն է՝ ազգային - ազատագրական շարժման ողին բարձրացնելու և հայրենիքի ազատագրական գաղափարները գրավոր կերպով ժողովրդին հաղորդելու ասպարեզում: «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատության մեջ հեղինակը կոչ է անում հայ երիտասարդներին արթնանալ անգործության խոր քնից և պայքարի ելնել սեփական հայրենիքի անկախության համար: Օտարի լուծը թոթափելու համար անհրաժեշտ էր, որպեսզի ժողովուրդը միասնական գործեր: Հեղինակը հորդորում է, որպեսզի հայ ծնողները իրենց զավակներին ուսման տան և սովորեցնեն զեղք կիրառելու հմտությունները, ինչը կարեղոր պայման էր հզոր հայրենիքի կայացման համար: Մ. Բաղրամյանը դրվատանքով է խոսում նախորդ դարերի հայ հոգեորականների մասին՝ փոխարենը մեղադրելով ներկա հոգեորդ դասին: Հստ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ի հայ հոգեորականները ժողովրդի մեջ չեն սերմանում ազգային-ազատագրական ողին, այլ անվերջ անեծք են կարգում ժողովրդի գլխին և ստեղծված ստրկական վիճակը ներկայացնում են իբրև ի վերուստ տրված պատիճ գործած մեղքերի համար. «Նրանք անվերջ, կարծես ուամկի կարգ ու բարքով, ժողովրդին իրենց կանչում են անիծյալ, և նրանց այդ անիծելու սովորույթը մեզ չափազանց ծանր է թվում, խիստ դժվատեհ, որովհետեւ մենք կարծում ենք, որ դրանով միգուցե թե հաճախակի շատ շատերի գլխին բերում են աղետներ»²:

Շատ ընդհանրություններ կային «Մաղրասյան խմբակ»-ի և Հ. Էմինի գաղափարախոսության միջև: Այս կապակցությամբ Լեռն նշում է. «Այստեղից մենք տեսնում ենք, որ Մաղրասի քաղաքական ընտանիքն էլ ուներ նույն դավանանքը, ինչ աշխատում էր կյանքի մեջ մտցնել Հովսեփ Էմինը»³:

¹ «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» գրքի հրական հեղինակի անվան վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Մինչև 1908 թվականը գրքի հեղինակն էր համարվում Յակոբ Շահամիրյանը: 1908 թվականին, երբ տպագրվեց Միմեռն Երևանցու «Յիշտառակարան»-ի երկորդ մասը Դիվան հայոց պատմութեան գրքի Ը հատորի մեջ, պարզվեց, որ «Նոր տետրակ...»-ի հրական հեղինակը Մ. Բաղրամյանն է: Ինչպես նշեցինք, այդ կարծիքին հակվելու պատճառ դարձավ այն, որ Մ. Երևանցին իր «Յիշտառակարան»-ում նշում է, որ գրքի հեղինակը Մ. Բաղրամյանն է. «Եւ՝ զի որպես վերոյ ասացաք, զգիրքն զայն այն խելացնոր Մովսեսն էր շարադրեալ, այլ երկնչելով ի պատժոց սրբ. Վեհին թերևս, ո՞չ զիւր անունն էր նակագրեալ իրը շարադրող, այլ զանունն Յակոբայ՝ որդուոյ Շահամիր Աղային»: (Տես Դիվան հայոց պատմութեան, գիրք Ը, Միմեռն կաթուղիկոսի յիշտառակարան, մասն երկորդ, Թիֆլիս, 1908, էջ 576):

Ըստ Մ. Երևանցու Մ. Բաղրամյանը իր անունը միտումնավոր չի գրել գրքի վրա՝ վախենալով կաթողիկոսից: Այդ պատճառով գրքի հեղինակ է նշվել Յ. Շահամիրյանը: (Տես Ա. Մնացականյան, Ո՞վ է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի հեղինակը, Պատմա-քանասիրական հանդես, 1962, № 2, էջ 131-142):

² **Պ. Խաչատրյան**, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, Երևան, 1991, էջ 51:

³ **Լեռ**, Յայոց պատմություն, Երկերի ժողովածու, հատոր Երկորդ, գիրք Երրորդ, Երևան 1973, էջ 314:

ինչպես Հ. Էմինի, այնպես էլ «Մաղրասյան խմբակ»-ի գործունեությանը դեմ դուրս եկավ Սիմեոն Երևանցին։ Ըստ Ամենայն Հայոց կաթողիկոսի, «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունը կարող էր հիմք հանդիսանալ կրոնական և քաղաքական վեճերի։ «Յիշատակարան»-ում կարդում ենք, որ երբ կաթողիկոսը տեղեկանում է Մաղրասում հիմնադրված տպարանի մասին, նամակով դիմում է Շ. Շահամիրյանին՝ հորդորելով նրան, որ չտպագրի այնպիսի մի գիրք, որը կհակասի ազգային եկեղեցու շահերին։ «Եւ գրէր սրբ. վեհին թէ՛ Շամիր աղայն պատմագիրք է յղեալ վասն քոյ, բայց ոչ էհաս մեզ։ Եւ խոստացաւ սմա ի հասանելն պատմագրին առ մեզ, չնորհակալութիւն գրել նմա։ Եւ պատուիրեաց ասել Շամիր Աղային՝ զի մի գուցէ միամտօրէն այնպէս գիրք տպիցէ, որ ազգիս և եկեղեցւոյս մերոյ վնաս լիցի»¹։ Մեր կարծիքով, թերեւս, կաթողիկոսը նախնական տեղեկություն է ունեցել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գրքի բովանդակության մասին, այլապես նա նման զգուշացում չէր անի։

Ամենայն հավանականությամբ կաթողիկոսի մոտ նման կասկած էր առաջացել այն պատճառով, որ ինքն արդեն տեղյակ էր «Մաղրասյան խմբակ»-ում Հ. Էմինի և Մ. Բաղրամյանի ծավալած գործունեության մասին։ Եվ քանի որ Մ. Երևանցին Հ. Էմինի և Մ. Բաղրամյանի քաղաքական ընկալումներին ծանոթ էր դեռ Հայաստանից, նա հավատացած էր, որ նրանք իրենց գաղափարները կարող են տարածել նաև Մաղրասում հիմնադրված տպարանի միջոցով։ Ուստի այդ էր խնդիրը, որ կաթողիկոսը նախապես զգուշացրեց Շ. Շահամիրյանին, որ նա երկրի հոգեոր և քաղաքական անդորրը խաթարող գրքեր չտպագրի։ Սակայն, Մ. Երևանցու կանխագումը իրականացավ։ Եվ ինչպես կաթողիկոսն է նշում իր «Յիշատակարան»-ում. «զգանգաւոր բանս այժմ գրեալ այն ի գլուխ եկն»²։

Հակառակ իր զգուշացումներին, Սիմեոն Երևանցին շուտով ստանում է «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ի տպագրված օրինակը։ «Յիշատակարան»-ում կարդում ենք, որ Շ. Շահամիրյանը և Գ. Զաքիկյանը նամակներ են ուղարկում կաթողիկոսին՝ խնդրելով, որ նա ևս աջակցի իրենց ծրագրերին³։

¹ Գ. Աղանեան, Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 370:

² Նույն տեղում, էջ 573։

³ «Եւ ի յայս այնքան էին հաստատապէս երեալ զմիտս իւրեանց, մինչ զի, և առ սրբ. Վեհին համարձակեալ գրեալ էին զայս, և Գրիգոր Աղայն ևս ձեռն էր երեալ ի վերայ թղթոյն։ Յորում նախ պաղատին կամակից լինիլ ինքեանց, ապա՝ զպէս և ծիծաղելի առաջադրութիւնս գրէին սրբ. Վեհին, թէ այսոքիւ հնար է՝ զի մտադրութիւնս մեր ի գլուխ ելցէ, այսինքն է՝ միաբանեցուցանել նախս զկրաց իշխանն ընդ Աղոանից իշխանացն։ Եւ թուղթ գրել առ կայսերութիւն Ռուսաց, և զօրինակ թղթոյն ևս գրեալ էին, թէ այսու օրինակաւ պարտիս գրել։ Ուսուցանէին և զկերպ իմանալոյ զիամար և զորքանութիւն ազգիս, և հարկադրելոյ ի ձեռն ... նոիրակաց՝ առ ի ուսանել զպատերազմ։ Եւ վասն նոցին

Հստ մաղրասյան ծրագրի, կաթողիկոսը պետք է Արքախի մելիքներին միավորեր Հերակլ արքայի հետ: Նաև նամակ պետք է գրեր՝ Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա II-ից օժանդակություն հայցելու նպատակով: Կաթողիկոսը պետք է հոգար, որ Հայաստանի տարբեր վայրերում ժողովուրդը զինավարժություններ անցկացներ և պատրաստվեր պատերազմի: Որպեսզի այս բոլոր ծրագրերի նյութական մասը լուծվեր, Շ. Շահամիրյանը և Գ. Զաքիկյանը Ս. Երևանցուն առաջարկում էին գաղտնի կերպով ժողովրդից գումար հավաքել:

Հայաստանում սահմանադրական կարգեր հաստատելու համար յուրաքանչյուր գավառ պետք է ընտրեր երկուական թեկնածու և նրանց ուղարկեր Ղարաբաղ, որտեղ տեղի մելիքների կողմից նրանցից մեկը կընտրվեր երկրի նախագահ:

Սակայն Ս. Երևանցին նամակով հանդիմանում է նրանց՝ գրելով. «վասն չմտածելոյ զվախճան վնասաւոր դիտմանց իւրեանց, և առանց խոկացման յայսպիսի վնասաւոր իրս ձեռնարկելոյ»¹: Ստանալով գրքի օրինակը՝ վեհափառը Շ. Շահամիրյանից պահանջում է, որպեսզի նա հավաքել տա գրքի բոլոր օրինակները և այրի:

Սիմեոն Երևանցին խիստ քննադատեց Մ. Բաղրամյանին, ում նա համարում էր գրքի տպագրման հիմնական «մեղավորը» և բանադրեց վերջինիս՝ արգելելով նրա հետ որևէ փոխհարաբերություն²:

զքոշակս ժողովել տալոյ ի ձեռն Առաջնորդաց և խոստովանահարց ի ծածուկ, որպէս զի ամենայն անձ յամենայն կիւրակէտ զնի մի փարայս տացեն: Եւ ըստ Եւրոպացւոց զկանոն և զսահման դնել ազգին՝ թարգմանեցուցանելով ի նոցունց, վասն աշխարհավարութեան՝ և զինոորութեան արհեստի, և կարգադրութեան դատաստանաց և այլոց, և նախարար մի կացուցանել բոլոր ազգին, որ թարց խորհրդոյ ծերակուտին և աւելի կամ պակաս քան զսահման թէ արասց ինչ՝ կողուսցէ զգլուխ իւր: Եւ այն նախարարն ժամանակաւոր լիցի, և ի միւս ամին՝ ուրիշ ուրիշ նախարար կացուսցի: Ուսուցանելին ի վերայ այսց և զկերպ ի հաւան ածելոյ զրոլոր ազգս, ընտրեալ յամենայն գաւառաց զբբ արս խոհեմս, որք ի Դարաբաղ առ Սէլիքն երթեալք՝ տացեն նոցա զընդունելութիւնս իւրեանց, և ընդունելին նոցա՝ բոլոր գաւառացն լիցին ընդունելիք»: (Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 575):

¹ Նույն տեղում, էջ 576:

² «... բանադրանք այն չիք Մովսիսին, և պատուի՝ զի մի ոք հաղորդեսցի ննա բանիւ կամ գործով»²: Գ. Զաքիկյանին ուղղված նամակներից մեկում Սիմեոն Երևանցին անհօւմ է Ս. Բաղրամյանի ծնունդը, մեղադրում նրան, որ հայ ժողովրդին խայտառակ արեց հարկան ազգերի մեջ. «քակեց իսպառ տունս Դայոց»: Կարողիկոսը Գ. Զաքիկյանին զգուշացնում է, որ իրենց Վտանգավոր գործունեության արդյունքը հետագայում բացասական հետևանքներ է ունենալու²: Կարողիկոսը նամակով կշտամբեց Շ. Շահամիրյանին և Գ. Զաքիկյանին, որտեղ Շ. Շահամիրյանին հայրապետը մեղադրում էր այն բանի համար, որ հնդկահայ մեծահարուստը, ահելի գումարներ վատնելով, տպարան էր իհմնել, որի գործունեությունը, ըստ Էության, չէր բխում հայ ժողովրդի շահերից. «Այլ զսական որ ի վերջոյ՝ համառօտ ասցից աստեն: Զի զկնի գերկուտանն ի միասին մեղադրելոյ՝ դարձոյց զբանն յատկապէս առ Շամիր Աղայն վասն տպագրատանն, թէ տպագրատուն հաստատողն կամ պարտի լինիլ ազգի գլուխ և հասարակաց հոգածու, որ զնախնեաց երանելաց գրեանս

«Յիշատակարան»-ից տեղեկանում ենք, որ Շ. Շահամիրյանը և Գ. Զաքիկյանը հետագայում նամակով խնդրում են Ս. Երևանցուն, որպեսզի կաթողիկոսը ների իրենց այն բանի համար, որ դեմ են դուրս եկել հայրապետին: Հայրապետը պատասխան կոնդակում 6 կետից բաղկացած պահանջներ է առաջարկում «Մաղրասյան խմբակ»-ի գլխավոր անդամներին¹: Վերջին՝ վեցերորդ կետով, ինչպես վերը նշեցինք, Սիմեոն Երևանցին բանադրում է Մովսես Բաղրամյանին՝ արգելելով նրա հետ որևէ փոխհարաբերություն:

Խորհրդային տարիների պատմագրությունը Սիմեոն Երևանցու վերաբերմունքը ազգային-ազատագրական շարժման նկատմամբ գնահատում էր իբրև հետադիմական երևույթ: Նման մոտեցմանը, թերևս, առիթ է հանդիսացել կաթողիկոսի բացասական վերաբերմունքը Հ. Էմինի և «Մաղրասյան խմբակ»-ի նկատմամբ:

Մայիսի ի լուսաւորութիւն ազգին, որպես Զուղայեցի Յակոբ կաթողիկոսն: Կամ պարտի լինիլ իմաստուն այր՝ անոանի և հոչակեալ գիտութեամբ, որ յինքն օգտաւէտ գրեան շարադրեալ տպեսցէ ի յօդուտ հասարակութեան: Եւ կամ թէ՝ են ևս ունանք, որք թեաւտ չեն գիտուն, և ոչ հասարակաց գլուխ, այլ զտպագրատուն հաստատեալ՝ զիասարակաց ընդունելի գրեան հրամանաւ մեծառաց տպեն և վաճառեն, առ ի գտանել այնու զայրուստս: Արդ՝ դու ոչ հասարակաց տէր և հոգածու ես ասէ, ոչ նշանավոր իմաստուն ոք, և ոչ ապրուստի կարօտ հասարակ անձն ոք, այլ ես դու ասէ ազնոատուն իշխան, և յամենայնի փարթամ և ունեոր, և գիտաւոր վաճառական մի աշխարհական՝ պարապեալ ի հոգս մարմնական: Ապա ի՞նչ հարկ էր քեզ, և կամ զի՞նչ վայել էր քունդ անոան՝ տաժանմամբ մեծաւ գիր բերել տալ ի ֆուանկստանու, և զտպագրատուն հաստատել, և զիշխանազուն որդի տպագրից կարգել՝ որ է գործ գրեկի և յետին աղքատի: Եւ տպեալ զայնպիսի գիրս, որ ից կործանիչ ազգի, շարադրեցեալ յումենն ոչինչ և աննշան իմաստակէ: ...Պահիցի այժմ զպատիւդ խնայելով ի քեզ, թեպէս դու ոչ ի մեզ խնայեցեր և ոչ ի քեզ»: (Տե՛ս, Դիւնան հայոց պատմութեան, գիրը Ը, էջ 577):

¹ «Ուրեմն՝ զոր ինչ ապաշխարութիւնն դնեն քեզ ասէ՝ պարտիս կատարեալ յօժարութեամբ, զի ընկալցիս զկատարեալ մերումն և գրողութիւն: Եւ ապաշխարանքն էին այսք: Նախ՝ զի զգիրքն զայն այրիսցէ իսպառ, և զորս ցրուեալ է աստ և անդ՝ ջանասցէ և հնարեսցէ զայնս ևս այրել: Երկրորդ՝ զի տպագրատունն զայն խափանեսցէ իսպառ: Զի ի Պոլիս՝ և Երեմն յԱմստերդամ, Երեմն ևս ի Զմիւռին մինչ զգիրեան տպեցին և տպեն, թարց հրամանի ոչ տպեն, իսկ դու զայդ նոր հաստատեցեր ասէ, և առանց զնեզ հարցանելոյ՝ զայդ կորստարեր գիրքը տպեցեր: Ից թէ կամ դու՝ և կամ յետագայք քո այլ ևս այդպիսի բանս տպիցէ՝ չհարցնելով մեզ վասն սաստիկ հեռաւորութեան տեղւոյդ: Ուրեմն, այն է լաւ՝ զի խափանիցեր, զի արհեստագէտ և չունիք, որ զմիստ բանին խոկացեալ՝ զօգտաւէտն և զանօգուտն ընտրիցէ: Իսկ այդ իմաստակը որ իբր արհեստագէտ ձևացւանէ զինքն, ոչ գիտ: զի՞նչ առնելն: Ուստի՝ թարց արհեստի և խոկացման տպոցեալն ձեր, թարց ի յամօթոյ և ի վնասուց զոչինչ օգուտ թիրէ ազգիս: Եւ առ զայս ևս յոյժ հարկ: Երրորդ՝ այդպիսի վնասաւոր բանիք այլ մի գրեք ասէ զրուղքս առ մէլիքսն խանսայու: Զի Յերթեկութենտ թղթոցն ձերոց ծայն ինչ ի վեր ելանէ ասէ թերևս, և կամ թուղթն ձեր տաճկաց անկանի, որ լինի վնաս ազգիս: Չորրորդ՝ պատոր՝ զի այն անօգուտ մտածմունսն այլ մի ևս արասցեն, և մի հետևեսցին զկնի նորին, որ անօգուտ է և նանիր: Յինգերորդ՝ զի զիսարեբայ Մովսեսն այն կամ վարեսցեն ի միջոյ իրեանց, և կամ ի տեղի ոչընչի համարելով՝ մի մերձեցուսցեն առ ինքեանս, զի ամօք մեծ է ձեզ ասէ՝ այդպիսոյ մտաթափի մոլեկան խելացն հետևիլ և անկանիլ ի բերան ազգի»: (Տե՛ս նույն տեղում, էջ 578):

Սիմեոն Երևանցին համարվում էր իր ժամանակի կրթված և հեռատես կաթողիկոսներից մեկը: Նա իր գահակալության տարիներին ձեռնարկեց և իրականացրեց բազում ծրագրեր, ինչպես կրոնական, այնպես էլ ազգապահանման բնագավառներում: Արդար չի լինի ասել, թե նա ընդհանրապես դեմ կամ անտարբեր էր ազգային-ազատագրական գործընթացին: Ուստի հարց է առաջանում, ինչո՞ւ կաթողիկոսը իրականում դեմ դուրս եկավ թե՝ Հ. Էմինի և թե՝ հետագայում «Մադրասյան խմբակ»-ի ազատագրական գաղափարներին ու ծրագրերին:

Սիմեոն Երևանցին, լինելով ազգի առաջնորդը, ավելի իրատես էր գնահատում ստեղծված իրավիճակը և ուժերի փոխարաբերությունները: Ճիշտ է, որ Հայաստանի սահմաններից դուրս՝ Հնդկաստանում, Ռուսաստանում և այլ հայկական գաղթավայրերում թուրքական և պարսկական բռնապետությունների դեմ կարելի էր բարձրածայնել յուրաքանչյուր գաղափար, որն ընդհանրապես հնարավոր չէր Հայաստանում: Քանզի Հայաստանը գտնվելով Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության ներքո՝ անկարող էր որևէ ազատական գաղափար անարգել ընդունել ու դավանել: Պարսիկ և թուրք պաշտոնյաներն ամենուրեք էին, և եթե նրանց հայտնի դառնար ապստամբական որևէ գործունեություն, ապա այն անմիջապես պատճառ կհանդիսանար նորանոր հալածանքների: Տիպիկ օրինակների մենք հանդիպեցինք, երբ Երևանի խանի գործակալները ձերբակալեցին Հ. Էմինի նամակատարին: Այս դեպքում պատերազմական գործողություններից հաջողվեց խուսափել միայն Ս. Երևանցու հեռատես միջամտության շնորհիվ, երբ նա վրաց Հերակլ արքային հորդորեց ետ կանգնել վտանգավոր գործողություններից: Մեկ այլ դեպք ևս կարելի է նշել, երբ ոռւս-թուրքական պատերազմի ժամանակ Մայր Աթոռի հոգեորականներին թուրքական իշխանությունները մեղադրեցին լրտեսության մեջ և ձերբակալեցին:

Կաթողիկոսն իր նամակներում թե՝ Հերակլ արքային, թե՝ Շ. Շահմիրյանին և թե՝ Գ. Զաքիկյանին զգուշացնում էր, որ եթե. «... թուղթն ձեր տաճկաց անկանի, որ լինի վնաս ազգիս»: Եվ, հետեւաբար, նրանց գործունեությունը հղի էր անկանխատեսելի զարգացումներով, ինչպես Մայր Աթոռի, այնպես էլ ողջ հայության համար: Վեհափառի համոզմունքն էր, որ եթե նրանց ծավալած քաղաքական գործունեության արդյունքում մահմեղական իշխանությունները փորձեին վրեժինդիր լինել, ապա հազիվ թե գտնվեր որևէ ուժ, որը կկարողանար կասեցնել նրանց:

Պատմագրության մեջ կարծիք կա, որ Սիմեոն Երևանցու ոեակցիոն վերաբերմունքն ազգային-ազատագրական շարժման նկատմամբ պայմա-

նավորված էր նրանով, որ այն թուլացնում էր եկեղեցու դիրքերը։ Պապական Արևմուտքում, միգուցե, կիրառելի էր այս ձեւաչափը, քանզի կաժոլիկ եկեղեցին պայքարելով պետության դեմ՝ փորձում էր պահպանել իր աշխարհիկ ազգեցության ոլորտները։ Հայ Առաքելական եկեղեցու պարագայում նման տարբերակը քիչ հավանական էր։ Եթե ընդունենք, որ եկեղեցին դեմ էր ազգային-ազատագրական պայքարին միայն այն պատճառով, որ պահպանի բացարձակ իշխանությունը, ապա կստացվի, որ այն իր ժողովը-դին ստիպողաբար մղում էր ստրկության։ Սակայն, Սիմեոն Երևանցին, լինելով այդ միջավայրի ծնունդ, բոլորից լավ էր հասկանում և կրում հայ ժողովրդի զրկանքները, ինչը երևում է հետեւյալ տողերից։ «Քանզի մնացորդն յազգէս մերմէ ոչ թէ ի յառաջքաղէ, այլ իբրև ի ճռաքաղէ մնացեալ է, են կարկտահարք, որդակերք և վտիտ ամեննեին, այնք ևս ոմանք ի դառն աղքատութեան և ի կարի պահանջմանէ իշխանաց անգլխոց, որք կանամբք և որդւովք ի տուէ և ի գիշերի անդադար յաշխատութիւնս հիւծեալք, հազիւ զապրուստս իւրեանց առ ձեռն բերեն, թէ քահանայք և թէ աշխարհականք։ Իսկ ոմնաք ևս որ կամաւ և որ ակամայ ընդ ծառայութեամբ իշխանաց մտեալք նոցա ծառային, զորս ի ձեռաց միմեանց խլեն ևս զօրաւորքն յանզօրաց վասն սակաւութեանն»¹։

Հստ էության, Սիմեոն Երևանցին ոչ թե դեմ էր ազատագրական պայքարին, այլ համոզված էր, որ պահը դեռ չի հասունացել այն ծավալելու համար։ Հայրապետը «Մաղրասյան խմբակ»-ի անդամներին հղած իր նամակներում նշում էր, որ նրանք չեն պատկերացնում, թե ինչպիսի դժվարին պայմանների մեջ է գտնվում հայ ժողովուրդը։ Իսկ նրանց կողմից առաջքաշած եվրոպական առաջադեմ գաղափարները Հայաստանում կիրառություն չեն գտնի, քանի որ դրանց համար անհրաժեշտ են բարվոք պայմաններ, որոնցից զուրկ էր երկիրը։ «...յԵվրոպա այսպէս և այնպէս կարգ և կանոն են եղեալ նորապէս, և օրըստորէ պայծառացուցանեն զազդն իւրեանց։ ...Շատ ամօթ իւրեանց՝ որ գեռ շատ տգետ են. դու զնոցա կացութիւն մեզ տուր և զմեր խղճութիւն նոցա, տես յայնժամ թէ ո՞վ լինի իմաստուն։ Միայն մէկ ամիս ընդ իշխանութեամբ տաճկաց անկանին։ Տես դու յայնժամ, թէ զբանականութիւնն ևս կորուստանեն, թէ ոչ։ Ի հարկէ թագաւորութիւնն ունին նոքա և հանգստութիւն, զոր ինչ և կամիցին, կարեն կանօնել՝ հաստատել և պահել տալ. և զոչ հնազանդողս և չպահողսն պատմեն չարաչար։ Մեր ազգն ո՞ւր և ընդ ձեռամբ որո՞ց, և յի՞նչ կացութեան կան, գիտե՞ս արդեօք, մեք ո՞ւմ վերայ դիցուք կանօն, և ո՞րպէս զամենեսեանս ընդ նոյն կանոնաւ պարաւանդեսցուք. որք յո՞քան ազգս

¹ Սիմեոն Երեւանցի, Գիրք որ կոչի Պարտավճար, Էջմիածին, 1779-1783, էջ 303։

տարածեալ կան, այնքան կերպիւ բարս և բնութիւնս, զկանոնս և զվարվեցութիւնս են ուսեալ»¹:

Հ. Էմինի և Շ. Շահամիրյանի ազգային-ազատագրական գաղափարներն իրենց տեսակի մեջ եղակի էին: Նրանք առաջինն էին, որ հայրենիքն ազատագրելուց հետո ցանկանում էին հաստատել սահմանադրական կարգեր: Մակայն որքանո՞վ էր դա իրագործելի: Ըստ Լեոյի՝ Շ. Շահամիրյանի և Հ. Էմինի ծրագրերը «ուտոպիշա» էին, քանի որ հայ ժողովուրդը դեռ պատրաստ չէր ընկալելու եվրոպական առաջադեմ գաղափարները. «... Շահամիրյանի հանրապետությունը, որ Ասիայի համար միանգամայն խորթ սկզբունքների ծնունդ կարող էր լինել. սկզբունքներ, որոնք, համենայն դեպս, դեռ պետք է հասկանալի դառնային, ընդհանրության մեջ գիտակցության արմատ բռնեին»²:

Շ. Շահամիրյանի և Հ. Էմինի ազատագրական գաղափարները փակուղու առջև էին կանգնում, երբ առաջ էր գալիս գործնականում այն կիրառելու խնդիրը, քանի որ հայրենիքում դեռ չկային համապատասխան միջոցներ՝ պայքարը նախաձեռնելու համար: Օրինակ բերենք Հ. Էմինի և Անգլիայում Ռուսաստանի դեսպան Սեմյոն Վորոնցովի երկիսոսությունից մի հատված, որտեղ Ս. Վորոնցովը, ծանոթանալով Հ. Էմինի ծրագրերին, նրան պատասխանում է. «Հերակլն այնքան աղքատ է, որ իր հայրը՝ Թեյմուրազը, եկել է այստեղ մեզանից թե՛ դրամական և թե՛ ռազմական օդնություն խնդրելու: Ի՞նչ կարող եք անել դուք իշխանի հետ, որին պակասում են այդ երկու կարևոր միջոցները»³:

Երբ հետեւում ենք Հ. Էմինի և «Մադրասայն խմբակ»-ի գործունեությանը, ապա տեսնում ենք, որ երկուսի նպատակն էր վրացիների և հայերի միավորմամբ ազատագրել Անդրկովկասը թուրքերից և պարսիկներից: Իսկ այդ գործընթացը հնարավոր էր իրականացնել միայն Ռուսական կայսրության օժանդակությամբ, որի նվաճողական նկրտումներն այդ ժամանակահատվածում համընկնում էին Վրաստանի և Զայաստանի ազգային-ազատագրական իղձերին: Հ. Էմինը և Շ. Շահամիրյանը մտերիմ հարաբերություններ ունեին Հերակլ արքայի հետ և իրենց ծրագրերը բազմիցս ներկայացրել էին նրան: Վրաց արքան ընդունում էր նրանց առաջարկները, սակայն ստեղծված իրավիճակում սեփական միջոցներով նա ի զորուչէր որևէ գործողության դիմել: Եթե նա ինչ-որ քայլ ձեռնարկեր, ապա դա կնշանակեր պատերազմ սկսել Թուրքիայի կամ Պարսկաստանի դեմ: Իսկ

¹ Ղիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 580:

² Ետք, Յայոց պատմություն, Երկերի ժողովածու, հատոր Երկորդ, գիրք Երրորդ, Երևան, 1973, էջ 323:

³ Life and Adventures of Joseph Emin, Calcutta, 1918, էջ 173:

դա չէր բիում վրաստանի շահերից, քանզի նա ամբողջովին կարող էր կորցնել իր կիսանկախ վիճակը: Հ. Էմինը և Շ. Շահամիրյանը համոզված էին, որ ծրագրերը իրականացնելու համար Հերակլին խոչընդոտում էր Ամենայն Հայոց կաթողիկոսը: Մակայն դա իրականությանը չի համապատասխանում և ունի մի պարզ բացատրություն. եթե վրաց արքան նույնիսկ չնչին հնարավորություններ ունենար բռնակալության դեմ պայքար ծավալելու, ապա նա հազիվ թե անսար Սիմեոն Երևանցու հորդորներին:

Դրա վառ ապացույցը 1768-1774 թթ. ուուս-թուրքական պատերազմի ժամանակ Հերակլ արքայի Ասպինձա գյուղի մատույցներում թուրքական զորքերի նկատմամբ տարած հաղթանակն էր: Հարց է առաջանում, թե ինչո՞ւ այս դեպքում վրաց թագավորը չհետևեց Սիմեոն Երևանցու զգուշացումներին: Զգետնեց, քանզի այդ ժամանակ իրական շարժառիթներ էին ստեղծվել Ռուսաստանի օգնությամբ հակահարված տալ թուրքական զորքերին:

Սիմեոն Երևանցին ամեն կերպ փորձում էր չեզոք դիրք հաստատել քաղաքական հարցերում:

Ուուս-թուրքական պատերազմի ժամանակ Կարսի փաշան փորձում էր Սիմեոն Երևանցուց տեղեկություն ստանալ, թե Հերակլ արքան ի՞նչ հարաբերությունների մեջ է ուուսների հետ և ի՞նչու է նա իր զորքերով շարժվում դեպքի թուրքիա: Հայրապետը խուսափում է իբրահիմ փաշային տեղեկություն հաղորդելուց՝ պատճառաբանելով, որ ինքն իրավունք չունի պետական հարցերի մեջ մտնել. «մեզ չէ համարձակելի, զի չունիմք հրաման յայսպիսի բանս խառնիլ»¹:

Սիմեոն Երևանցին համոզված էր, որ եթե հանպատրաստից պայքար սկսվեր մահմեդական իշխանությունների դեմ, ապա այն կործանարար հետևանքներ կունենար երկրի համար: Արդյո՞ք տեղին էին կաթողիկոսի նման կանխատեսումները:

1768 թ. սկսված ուուս-թուրքական պատերազմը լավ առիթ էր, որպեսզի ազատագրվեր Հայաստանը: Մակայն պատերազմում հաղթանակ տարած Ռուսաստանը 1774 թվականին Բուլղարիայի Փուչուկ-Կայնարջի գյուղում թուրքիայի հետ կնքված հաշտության պայմանագրով իրեն կցեց Հարավային Ռուսականայի տարածքը, մինչև Հարավային Բուգ և ազատ մուտք ունեցավ դեպքի Սև ծով: Փաստորեն, հայերի և վրացիների ցանկությունը չիրականացավ՝ Անդրկովկասը դեռ շարունակում էր մնալ մահմեդականների իշխանության ներքո: Ուուս-թուրքական պատերազմի ընթացքում, ինչպես նշեցինք, Ասպինձայում Հերակլը պարտության մատնեց թուրքերին, սակայն հետագայում վրաց արքան տարածայնություններ ու-

¹ Դիւան հայոց պատմութեան, գիրք Ը, էջ 117:

նեցավ ոռւսական զորքերի հրամանատար Հենրիխ Տոտլեբենի¹ հետ, ով իր զորաբաժնով հեռացավ Անդրկովկասից: Հերակլի գործողությունները նույնպես անհաջողության մատնվեցին: Պատմական իրադարձությունների նման ընթացքը ցույց տվեց, որ Հ. Էմինի և Շ. Շահամիրյանի նպատակները, կապված Հերակլ արքայի հետ, ի դերև ելան. «Հերակլը որքան հեռու էր այն իդեալը լինելուց,- գրում է Լեռն,- որպիսին դարձրել էին նրան Շահամիրյանն ու նրա նման մտածողները»²:

Արմեն Երևանցին հստակ գիտակցում էր ստեղծված ուղղմաքաղաքական իրավիճակը Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Զմոռանանք, որ նա 1773 թվականին Ռուսաստանի հայկական թեմերի առաջնորդ էր նշանակել Հ. Արդությանին, ով սերտ հարաբերությունների մեջ էր ցարական արքունիքի հետ և բուռն մասնակցություն ուներ Ռուսաստանի կովկասյան քաղաքականության և ազգային-ազատագրական հարցերի քննարկման համար ցարական արքունիքում հրավիրված խորհրդակցություններին: Այստեղ հարկ է նաև ավելացնել, որ կաթողիկոսը ևս դրական հարաբերություններ ուներ անձամբ կայսրուհու հետ: Թերևս Միմեն Երևանցին ավելի մոտ էր կանգնած ոռւսական իշխանություններին, քան որևէ մեկը, և ավելի տեղեկացված էր ցարական իշխանության նպատակներին: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով էր, որ հայրապետը դեմ էր վաղաժամ ապստամբությանը:

Ռուս-Թուրքական պատերազմը ցույց տվեց, որ Ռուսաստանը դեռ իր նվաճողական քաղաքականության մեջ չէր պլանավորել Անդրկովկասի «ազատագրումը»: Պարսկաստանը և Թուրքիան իրենցից ուժ էին ներկայացնում, որոնց դեմ պատերազմելը և հաղթանակ տանելն այդքան էլ դյուրին չէր, նամանավանդ, որ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում եվրոպական հզոր պետությունները օժանդակում էին Թուրքիային՝ փորձելով հակադարձել օրլուստորե հզորացող ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականությանը: 1804 թ. սկսած ռուս-պարսկական պատերազմի սկզբնական շրջանում ռուսական զորքերի գործողությունները Հայաստանում ևս անհաջող ընթացք ունեցան: Գյանջայի խանությունը գրավելուց հետո ցարական զորքերի հրամանատար գեներալ Պավել Զիցիանովը շարժվում է դեպի Երևան, որտեղ թագաժառանգ Աբաս Միրզայի

¹ Կոմս Գոտլոր Կուրտ Յենրիխ ֆոն Տոտլեբենը ցարական Ռուսաստանի գեներալ էր: Մասնակցել է 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմին, սակայն նինչ պատերազմի ավարտը՝ 1773 թ. մահացել է: 1769 թ. առանձին զորաջոկատով մարտական գործողություններ է անցկացրել Վրաստանում թուրքական զորքերի դեմ: Մանրամասները տես՝ Պոտո, Վасилий Ալեքսեևич, Կավказская война, том 1, стр. 58:

² Լեռ, Յայոց պատմություն, Երկերի ժողովածու, հատոր Երկրորդ, գիրք Երրորդ, Երևան, 1973, էջ 328:

գլխավորությամբ հաստատվել էր պարակական 30 հազարանոց բանակը: Երևանի խանության տարածքում Ցիցիանովին հաջողվում է պարտության մատնել պարսիկներին: Սակայն Երևանի Մահմադ խանն իր զորքերով ամրացել էր քաղաքի բերդում: Երկար պաշարումից հետո Ցիցիանովին չի հաջողվում գրավել Երևանի բերդը և 1805 թ. սեպտեմբերի 5-ին նա դադարեցնում է պաշարումը և զորքերը ետ քաշում Վրաստան:

Իուսաստանի նման հզոր կայսրությունը 1804-1812 թթ. պատերազմում մեծ դժվարությունների գնով կարողանում է հաղթանակ տանել Պարսկաստանի նկատմամբ՝ ազատագրելով Հայաստանի որոշ տարածքներ՝ (Շիրակ, Լոռի, Ղազախ, Շամշադին, Զանգեզուր, Ղափան, Ղարաբաղ և այլն): Սակայն երկրի կենտրոնը դեռ շարունակում էր մնալ պարսկական տիրապետության ներքո:

Այս պարագայում, ընդունենք, եթե Սիմեոն Երևանցին հետևեր Հ. Էմինին և Շ. Շահամիրյանին և, որպես ժողովրդի առաջնորդ, ձեռնարկեր ապստամբական գործողություններ իշխող պետությունների դեմ, ապա անհաջողությունների դեպքում հետևանքները ծանր էին լինելու: Մանավանդ կովկասյան արշավանքի ժամանակ ձախողվել էին ոռւսները, և անհաջողության էին մատնվել նաև վրացիները: Պարզից էլ պարզ է, որ ազգային-ազատագրական պայքարը դաժանորեն կճնշվեր և անողոք հալածանքներ կսկսվեին հայերի նկատմամբ: Սիմեոն Երևանցու չափազանց զգուշավորությունն այս հարցում ունի ևս մեկ արդարացում. եթե կաթողիկոսը մասնակցություն ունենար ազատագրական շարժմանը, ապա նա, անկասկած, կվտանգեր նաև Մայր Աթոռի հետագա գործունեությունը, քանզի մահմեդական կառավարիչները նրան կմեղադրեին հակապետական գործողությունների մեջ այն պարզ պատճառով, որովհետեւ կաթողիկոսն էր հանդես գալիս սեփական ժողովրդի անունից: Օրինակ բերենք Մուստաֆա III (1757-1774 թթ.) սուլթանի նամակն՝ ուղղված Սիմեոն Երևանցուն: 1770 թվականին գրված նամակում սուլթանը կաթողիկոսին հայտնում է, որ կասկածներ ունի, թե նա ոռւսներից 50.000 դուռուշ կաշառք է վերցրել և պատերազմական գործողությունների ընթացքում օժանդակում է նրանց¹: Ս. Երևանցին միշտ խուսափում էր քաղաքական մոտիվներ ունեցող հարցերից, սակայն այդքանով հանդերձ նա համարվում էր առաջին կասկածյալը մահմեդական իշխանությունների համար:

Այսպիսի հանգամանքներից ելնելով էր, որ Սիմեոն կաթողիկոսը փորձում էր համոզել Հ. Էմինին և Շ. Շահամիրյանին ետ կանգնել իրենց գա-

¹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն վավերագրեր, ցուց. № 29, թղթ. № 1η, վավ. № 471:

դափարներից: Երբ հետադարձ հայացք ենք նետում պատմական իրադարձություններին, տեսնում ենք, որ Սիմեոն Երևանցու զգուշավոր քաղաքականությունը տվյալ ժամանակաշրջանում ավելի արդարացված էր քան Հ. Էմինի և Շ. Շահամիրյանի ծավալած գործունեությունը: Ճիշտ է, և՝ Հ. Էմինի, և՝ «Մաղրասյան խմբակ»-ի ազգային-ազատագրական գաղափարները գովելի էին, որովհետեւ նրանք ի վերջո սեփական ժողովրդի և պետության անկախության համար էին մաքառում, սակայն այդ գաղափարներն իրականացնելու համար շատ կարևոր հանգամանքներ բացակայում էին, և ուղղակի պայքար սկսելը, ծանր հետևանքներ կարող էր ունենալ:

Ուստի պատմագրության այն կարծիքը, որ Ս. Երևանցին հետադիմական գաղափարներ ուներ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ և դեմ էր նրա ծավալմանը, այնքան էլ օբյեկտիվ չեն: Քանզի մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կաթողիկոսը ոչ թե դեմ էր, այլ համոզված էր, որ նման պայքար ծավալելու համար պետք են նախադրյալներ, որոնք այդ ընթացքում բացակայում էին: Փոխարենը Սիմեոն Երևանցին այնքան հեռատես կրոնական և քաղաքական գործիչ էր, որ կշռադատելով իրավիճակը, խուսափելով ավելորդ արյունահեղությունից, կարողանում է հարաբերություններ ստեղծել ուսւական կայսրության հետ, և այդ հարաբերությունները հիմք են դառնում, որ հետագայում՝ 1828 թվականին, ուսւական զորքերն «ազատագրեն» Արևելյան Հայաստանը, ինչին ընդհանուր առմամբ ձգտում էր «Մաղրասյան խմբակ»-ը:

Եվ այն, որ կաթողիկոսը հոգու խորքում դեմ չէր «Մաղրասյան խմբակ»-ի գաղափարներին, վկայում է այն փաստը, որ իր կյանքի վերջին տարիներին նա Մ. Բաղրամյանին ազատում է բանադրանքից: Այդ մասին մենք տեղեկանում են Մատենադարանի 3738 համարի ձեռագրից, որի մեջ Սիմեոն Երևանցու հաջորդ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի նամակն է՝ ուղղված Հնդկաստանում Էջմիածնի նվիրակ Գրիգոր վարդապետին: Նամակի բովանդակությունից պարզվում է, որ Կալկաթայում Գրիգոր վարդապետը հանդիպել է Շ. Շահամիրյանին և վերջինս Գրիգորին է հանձնել Սիմեոն Երևանցու բանադրական թուղթը: Առանց Մայր Աթոռի համաձայնության Գրիգոր վարդապետը վերցնում է թուղթը Շ. Շահամիրյանից: Որպեսզի հետագայում խնդիրներ չունենա ինքնազլուխ գործունեության համար, Գրիգորը նամակ է գրում Մայր Աթոռի միաբան Մկրտիչ վարդապետին՝ հարցնելով, թե արդյո՞ք ինքը ճիշտ է վարվել՝ վերցնելով բանադրական թուղթը: Մկրտիչը, երբ այս մասին հայտնում է Ղ. Կարնեցուն, կաթողիկոսը նամակ է գրում Գրիգորին՝ արդարացնելով նրա քայլը: Կաթողիկոսը նամակով Գրիգորին հայտնում է, որ Ս. Երևանցին մի առանձին

Կոնդակով արդարացրել էր Շ. Շահամիրյանին և բանադրանքից ազատել Մ. Բաղրամյանին¹:

Այսպիսով, սույն հոդվածում փորձեցինք հնարավորինս ամբողջական ներկայացնել Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի գործունեությունը 18-րդ դարի երկրորդ կեսի քաղաքական, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարի համատեքստում:

Իհարկե թեման դեռ կարոտ է ավելի խոր և համակողմանի ուսումնասիրության, այնուհանդերձ, մենք շարունակում ենք մնալ նույն կարծիքին, որով հայոց 115-րդ կաթողիկոսը դասվում է ամենաերեսելի հայրապետների շարքը:

¹ «Գիտեա առ այդ. զի լուսահոգին քանիցս անգամ յետ այնորիկ գրեաց զքուդք օրինութեան և մխիթարութեան և շահեցողութեան առ Շամիր աղան: Եւ մանաւանդ նա վասն Բաղրամեան Մովսեսին արծակման զիր էր խնդրեալ, լուսահոգին զայն ևս գրեալ յիեաց յանցեալ ամին որպէս ահա տեսանելոց ես ի յօրինական գրոյ լուսահոգւոյն՝ զոր այժմ առ քեզ յիեցաք: Ուրեմն շատ լաւ ես արարեալ զայն մեղադրական թուղթն առնուլդ...»: (Տե՛ս Մատենադարան, ձեռ N 3738, ժապավենի վրա, էջ 220):